



և այս առթիւ Պիտարը իշխանն հեծելոց զօրավար անուանեցաւ :

Դեմարտ 23 մարտ.

Հասարակաց խորհրդարանն 13/ի դէմ 209 ձայնիւ երբորդ անդամ ընդունեց թագուհւոյն նոր տնտեսային վերաբերեալ օրէնքը :

Պ. Տիւրպէլի՝ եղբայրացի խորհրդին բաղձանաց համաձայնելով Պ. Միլիքիէն Գէլի տեղեկագիրը չարտի հրատարակելի փարիզ 23 մարտ.

Հասարակաց կրթութեան և կրօնական գործոց նախարար Պ. Վատկեման՝ աստիճաններ շարժելու իրաւունքը պետական վերադարձնելու օրինաց ծրագիր մը էերկայացուց երեսփոխանաց ժողովոյ :

Երբակուտին յանձնաժողովն անընդամտ է ներգրութեան առաջարկութեան : Պ. Նաթէ և այլ արմատականք կրօնից համար տեղութեան գանձէն եղած ծախքը ջնջելու : նոյնպէս գումարմանց և ընկերակցութեանց ազատութիւնը սեղմող ամեն օրէնքները խորհանելու առաջարկութիւններ ներկայացուցին :

Ժողովը պաշարման վիճակը վերջնաբար առաջարկութեան վրայ տրամ վիճարանի վաղը :

Ղիկնա 24 մարտ.

Գաւառաց կառավարիչներն հրաման ըրին իշխանութեանց, որ Սերիկոյ կառավարութեան Պրիլիէն ապստիկ գնած 60000 Շասրօ հրացաններուն սահմանագլխին անցնին արդարեւ :

Երկրպետն երկրական վիճակին վրայ Պ. Քէյի տեղեկագիրն Հրատարակութիւն արձեղնով անկում պատճառեց :

Մարտի 24 մարտ.

Ազգային ժողովոյ մէջ հակակցերու կան յուզում մը կայ, որուն կառավարութիւնն ալ կը նպաստէ :

Գաշիքէ 24 մարտ.

Հուզար փաշան Եւրոպա կերթալ կը հաւատեն թէ պաշտօն յանձնուած չէ իրեն :

Կալիսի իշխանն երկուշաբթի մեր քաղաքը կ'ապստուի :

Դեմարտ 24 մարտ

Ուս. ԲՕՆԱ.	17 1/8
Ֆոխ	865 22
»	4869 49 3/4
»	4871 27
»	4872 33
»	4873 49 1/8
Եւրպոս.	58
Ազգ. ԲՕՆԱ.	94 3/8

Ի իրարու 24 մարտ

Բաւաղակ Միտիլի—Օրլան	6 3/4
» Գար Տօլէրան	4 5/8

Ծախում 12000 հակ :

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կըսուի թէ վ.Յ. Սուլթանը գարնան օրերը Չրազանի պալատն անցունելու գիտաւորութիւն ունենալով, յիշեալ պալատին կարասիներն ու զարդերը կը նորոգուին :

Բ. Դանէն լրագրաց հաղորդեալ պաշտօնական ազգ. մը կը ծանուցանէ թէ իսթինաֆի ատնին քաղաքային և առևտրական դատարաններուն առջև դատ ունեցողներն որոշեալ ժաման անպատճառ պէտք է ներկայ գտնուին, ապա թէ չ'ոչ այն օրը դատարանին չ'արտատեսուի, և ցուցակին մէջ ամենէն վերջը պիտի նշանակուին :

Բերայի օտարականութիւնն այս շաբթու յիտունի չափ կռակած չ'աւարագործ մարդիկ բռնելով կ'. Պոլսոյ օտարականութեան ևեճ բանար զրկեց :

Չորեքշաբթի առաւօտ 6/ի ք.ք.թ. խորհրդի 18/ի շաբթու Պէտլիքանէէն թարապիտ փնայած ժամանակ նախարար Գեքր առաջատանան մը տեսաւ ծանրապէս բեռնաւորուած, որ ընկղմելու վտանգի մէջ էր, իսկոյն չորեքանար կեցընելով մակոյն ինչոց և առաջատանաւին մէջ գտնուող երկու մարդոց օգնութեան զրկեց. բայց մակոյնը դեռ չհասած, մեծ կոհակ մ'առաջատանաւին վրայ կ'իջարկ ծովաօդ ըրաւ : Մէջի երկու մարդոցմէն մին նախ ընկղմած ժամանակ ինքզինք քուրս նետելով չորեքանարն մակոյն

առնուեցաւ, բայց միւսն առաջատան մէջ բռնուելով՝ չկրցաւ ազատիլ և ծովուն յատակն իջաւ : Ընկղմեալ նաև երկու շղթայ բեռցած էր :

### ԳՐԵՐԵՒԵՆ

Ղալաթի 12 մարտ.

Օսմանեան Պանքային 1876 յունվարի կտրօններուն վճարումը դադարեցնելու լրոյն վրայ բացատրութիւններ հրատարակեցաւ : Ելուժող պաշտօնատուներ 13 օր յառաջ արժեք լքող վճարմանց յատկացեալ եկամտից ցուցակը Պանքային հաղորդած ժամանակ հրամայած էր որ մարտի 1 էն սկսեալ այս եկամտից հասցը 1876-77 ի վճարմանց համար պահէ : Պանքան ասոր հաւանութիւն տալով հանգերձ առաջարկած էր որ ուրիշ եկամուտներ նշանակուին յունվարի կտրօններուն համար, եւ ելուժող պաշտօնատուներն ալ համաձայնելով, միայն ժամանակ խնդրած էր : Ուստի Պանքան ճէզդիրի իսանը հրաման զրկած էր որ օրը միայն 4000 լիւրայի կտրօն վճարուի փոքր գումարներ պահանջողներու : Բայց այս միջոյն առժամանակեայ է, եւ դաւառներն հրաման գնացեր է որ Պանքային ճիւղերուն 50.000 լիւրա վճարեն : Միւս կողմանէ ապրիլի կտրօններուն համար ալ կըսուի թէ կարճ պայմանաժամով փոխառութիւն մը յաջողի է : Այս յաջող լրոյ, վրայ արժեք լքողներն եւ նեւ սկսան եւ այսօր քօնաօրիտէն 19,9 է :

Լանարայի Օսմանեան դեպոստանատուներ սուս հանած է Պ. Համօտի եւ Բարձր Մեճ-Երարքոսին մէջ համաձայնութիւն մը կեցած ըլլալու զըրոյնքը :

ԱՌՏԱԿԵՆԱԿԵՂԻԾ	
ԵՍԶՄԵ ԱՌՄԱՌՄԵՒՏ	
12 մարտ ուրբաթի իրիկուն	19, 23
13 մարտ շաբթի առաւօտ	19, 6
բացուեցաւ	19, 9
ժամ 5 ին	
Կ. Պոլսոյ 12 շաբաթ	
Ասիական Բանկի բաժնիք	3, 15
« Բանկային ընկերութեան »	2, 12
Կ. Պոլսոյ Պանքային »	4, 25
Բրիտանական Բանկ »	3, 33
Բեռլինի Պանքո-Սթրաք »	
Երկրակառուցող »	54 1/2
Փոխ. 4863 »	118
» 4865 »	120
» 4869 »	107
» 4872 »	31
» 4873 »	404
Թրուսիայ »	4, 30

ԸՆԹԱՍԵՐ ԳՐԱՄՈՒՅ	
12 ՄԱՐՏ	
Սնդ. լիւրա »	411
Նաւթի ու կի »	88 25
Իրիկոյ Բուս »	90
Վրացի »	54 30
Չնգ ֆրանք »	
Չնգ ֆրանք »	466 20
Չնգ ֆրանք »	438

### Ա. Չ. Ա. Յ. Ի. Ն.

Ազգային ժողովն երէկ գումարեցաւ Ղալաթի կեղեցիկ ընդ նախագահութեամբ Ա. Մ. Պատրիարք Տօր, և ատենադատութեամբ Վոսթ. Ստեփան փոշոյի Սրբանան : Ժամ 7 1/2 ժամ ատեն բացուեալով, նախընթաց նախն ատենագրութիւնը վաւերանայեց և նախաքննիչ գիւնաց ուսնց համառօտ անգլիկոզրիբը կտրագործեց ետե՛ Սրբազան Պատրիարք Տօր առաջարկութիւնները քննող յանձնաժողովին մնացեալ անգլիկոզրիբը մի առ մի կտրագործելով Ժողովոյն որոշմանը ներկայացան :

1. Մուրտեան վարժարանի խնդրոյն վրայ յանձնաժողովին կտրակարգութիւնը թեթեւ բարեփոխութեամբ մ'ընդունուեցաւ, որ կառավարիչը յիշեալ խնդրոյն համար ընտրուած յանձնախումբը վերադարձնելու հրահրելով խնդրելով որ այս խնդրոյն վրայ իւր անգլիկոզրիբը գտնէ մինչև երէք ամիս ներկայացընէ :

2. Ս. Պատրիարք Տօր սահմանագրական պատասխանատուութեան խնդրոյն վրայ համառօտ վիճարտութիւն մ'ըլլալէ ետե՛ գիւնին առաջարկութեամբ որոշուեցաւ որ կտրագործ անցունել իրիկ սահմանագրական ամենակաւեար խնդիր, և յաջորդ նախն առաջին կեղիք ընելը :

3. Սոյ իրաւիկոզրիբին խնդրոյն վերաբերեալ հարցման նկատմամբ յանձնաժողովին անգլիկոզրիբը կտրագործեալ, կըրարացուի ինչը բաւական երկար վիճարտութեան մը նիւթ կըսաւ : Յանձնաժողովը կառավարիչը, որ Սոյ կաթողիկոսին առաջարկութիւններէն ու պահանջումներէն ուսնց ապօրէն և սնանց անգ օրձագրելի ըլլալով ազգէն չընդունուիլը ըլլալով վարչութեան կողմէ պաշտօնապէս ծանուցուի իրեն յայտնելով, որ եթէ գործնայ անոնց վրայ պնդէ՝ հրաժարականն ընդունուած է, իսկ եթէ կաթողիկոսն հրաժարի այն պահանջումներէն և իւր կաթողիկոսական պաշտօնը շարունակել յանձն առնու, այն ժամանակ վարչութիւնն արժանը անօրինէ :

Այս առաջարկութիւնն ուսնը վարչութեան որոշմանը հակառակ համարելով մինչև իսկ վարչական տաքնապի կասկած յարուցին, բայց Ս. Պատրիարք Տօրին ինչպէս նաև արիշ երեսփոխանը և գիւնայն ու ի միտան պնդեցին թէ խնդիրը վերջնական որոշում ստացած չէր, այսինքն ազգային ժողովը Սոյ կաթողիկոսին պահանջումները բացորոշապէս մերժած չէր :

Այս յայտարարութեան դէմ խօսեցաւ զիլաւարապէս Գեքր Խօրէն արագան, բայց ի վերջոյ ժողովին ատենագրութիւնները կտրագործեալով Ս. Պատրիարքին և գիւնին կտրիքն հաստատուեցաւ : Ասոր վրայ ժողովը որոշեց մի առ մի քուէի դնել Սոյ կաթողիկոսին չորս պահանջումներն և ամենն ալ մերժուեցան :

Այս քուէէն ետե՛ յանձնաժողովոյ առաջարկութիւնն ալ քուէի գրուելով 23 ի գէմ 26 ձայնով ընդունուեցաւ :

Սոյ միջոցին ժամը 10 զնոցած ըլլալով, ատենը գոյուեցաւ 13 օրէն գումարուելու որոշմամբ :

Թիֆլիսի Հայ լրագրիք կը ծանուցանեն թէ Գեքր Գարիբէլ Այլազղվաքն արագան Թիֆլիսի առաջնորդ անուանելու է փոխանակ Գեքր Մակար արագանին, և այս վերջինն ալ Նօր-Նախիջևանայ և Պեսարապիոյ առաջնորդ անուանելու է :

### ԵՅԻ ԵՅԻ Բ

Անիէր-Գեճե՛ր-Արաբի իշխանին ետե՛ն ի Հնդ կաստան զրկուած էր արագան լրագրաց թղթակիցներէն մին հետեւ ալ կերպիւ կը նկատուի Սիլիսիոյ զիլաւար քաղաքին վեղարագատի մէջ գտնուած հաշակաւոր մահանը :

Սիլիսիոյն սրբազանը իստա զարմանալի և բազմաբար շէնք մ'է, թէ և ճարտարագիտական ձևն այնչափ գովեստի արժանի չ'երկիր Մեհ-

եանն սպիտակ մարմորայ որմերով և քարափով շրջափակեալ լին մը մէջ տեղը քառակուսի կողոյ մը վրայ շինուած է, ուր երկու համար նմանապէս սպիտակ մարմորանէ պարտայ մը կայ որ մին նոյն նիւթէ կերտեալ գեղեցիկ հովանոցի մը ներքե էն կանցնի : Ե՛նքը գրեթէ բովանդակ խորութէն մինչև գմբէթայ և մինաբէից ծայրը սփեղծ կը ցոյայ :

Երբ ներս մտնելու կ'աւաք, վտանգի Սիլիսիոյն հնդ իկնելուն չափ օտարանք չըլլալով՝ օտարականաց թոյլ կուտան իրենց տաճարաց մէջ մտնել : Խոսի մը քրմեր ծուխն չօքած քրթնելով չեմ գիտեր ո՞ր տասուձայն աղօթք կերգէին, և ինչ մը հաւատացեալ քայլ որոց փոքրիկ սպիտակ շաքարեղէններ կը բաժնէին, իւրաքանչիւրն ըստ իւր կարողութեան փոքրիկ պղնձեայ դրամներ և մինչև իսկ լեցնելով թոյլ կը ձգէին մեծ պղնձեայ դրամաց շեղուկայի մը մէջ՝ որ սրբազանին մէջտեղ կը տեսնուէր փառակազմ ահագին գրքի մը առջև : Մեք ալ քանի մը ուսփի նետեցին քաղմութեան, և փոխաբէն այնքան շաքարեղէն ընծայեցին մեզ որ դրամներն առ չ'ընաց լեցնելու :

Բայց մեհնին շարժը դանուած միջնորդն ներս մտնելէ յառաջ քառակուսի էինք մեր ոտից կոշիկները փոխել, որք կրնային այդ ներսերական վայրը պղծել և անոնց տեղ բոց կայ գուրպոյններ տնցուցած էինք ստեղծելու, որոյմէ տաճարին դրանն առջև հարկի րնիւրով դիզուած կային և կրտու թէ կաշեփի իշխանը միաք չ'ունի կոշիկներն հանելու : ուստի սուրբ չհամարուած հովանոցի մը բարձրէն մեհնին մէջը նայելով պիտի բաւականանայ : վտարն զի կաշիէ կոշիկներով մեհնէն ներս սուք կոխել Սիլիսիոյն մահու չափ նախատինք մ'ընել կը նշանակէ և զոյս ընողն ամեն բան աչքն առնելու է :

Սիլիսիոյն ցեղը հիւսիսային Հընդ-կաստանի ամենէն խորտա ժողովրդներէն մին կրնայ համարուիլ : իրենց ազանդն 1170 ին ատենները հիմնուած է Հասա քաղաքէն և Շաթրիանիւրե այժմ սպառեալ կամ աղաւաղեալ գտակարգութեանէն Նաւաք անուն վերանորոգչի մը ձեռամբ : Այս անձին նպատակն էր Մահմադականներն ու հիւսիսային Հնդիկներն իրերաց հետ հաշտեցնել և առհասարակ փոխապարգութեանց կամ ջոկերու աղերարար գրու թիւնը շնջել : Իւր վարչապետութիւնը շատ ընդունելութիւն գտան ինչնայի ընտելաց մէջ, որոց անկախութեան ոգին կը գոգէր մարդոց հաւատարմութեան վրայ Մարգարէին յայտնած գաղափարներն : Նոյն իսկ Մոզլ կայսերաց ամենէն կրօնատէրն համարուած Աւրիկ Զիլ սուլթանին հետ ձեռք ձեռք, որ մեծ ստատիկութեամբ շարունակուեցաւ, Նանաքի աչակերտաց եռանդն արժարձելէ դատուելի բանի չը ծառայեց :

Սակայն այս ազանդոս տակու առ տակու տեսի մը պատերազմական կողայրակցութիւն գործաւ կարգ կարգ բաժնուած և մանուար մարգարէներու վարչութեան ներքե, որ լուսքէ և գրէ աւելի որոյ սիրահար էին : Այդպէս Սիլիսիոյ պատմութեան ամենէն վառաւոր ժամանակն 1176 ին կ'սկսի հասակաւոր Ռոճէթ Սիլիկի ծընընդ եւ մին, որ ներկայ դարու մէջ տեղուանքը 20 միլիոնէ աւելի բնակչօք կայրութիւն մը հիմնեց, և որոյ մէջ կը պարտնակէին բայ ի բէնճապէ, Հնդ կաստանի Մուլթան, Բէ-

չափէր և փայլիւր անուն նահանգ- ները :

Բայց այս իշխանիս մահուանէն վերջը որ Անդրիոյ հեղեղիկան ընկե- րա թեան հետ բարեկամութիւն պա- հելու խելացութիւնն ըրած էր, Այլ- խելը ներքին երկդառակութեամբ և կուլիւրով տկարացան, ուսիկց Անդրիոյ ալօքուտ քաղկեդ թաղում արիւնքուշտ պատերազմներէ վերջը կրցաւ ուրբունն ընկնել զանոնք և քիչ քիչ բարձրովն իւր իշխանութեան ներքեւ առնուր Աստուծոյ Սիկեք, հա- կառակ իրենց պատերազմներ ընա- ւորութեան, Անդրիոյ հաւատարմա- գոյն հպատակներն մին կը համար- ուին, և 1837ի Հեղեղեացի մեծ ա- պստամուտութեան առնել ալ թանկա- գին ծառայութիւն մատուցին Անդ- յիական բանակին, մանաւանդ Տէլ- հին պաշարման առնել :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴՐԱՍԻ ԸՆՏԵՆԻՔ

Նոր Հայ Ընտանեաց

Իր գանուի Ս. Ղ. և Եղաճեան գրատունը Ենի-ձամի փողոց թիւ 8, և ուրիշ գրախոսաց քով. Գին 1 Փրանք 75 անթիլ :

Ամեն իորման Սրբազանի ճար- ար գրչէն երաճ ընտիր դորձ մը, որ ընտանեկան կամ ամուսնական կե- ճաց բարեւոքումն և լուսոյ ու կրթու- թեան միջոցաւ ազգին վերանորո- ղումն իրեն նպատակ բռնելով, որ- զ իրական, ամուսնական ծնողական և ընտանեկան փոխադարձ պարտեաց և իրաւանց, ընտանեկան դատարար- կութեան, ամուսնութեան խափանա- րար զեղծմանց, ամենից քահանայի պարտեաց, վերջապէս ամուսնական և ընտանեկան կենաց ամեն պարտախ- նու թիւններուն վրայ կը խօսի այն զո պայման ազգու և դրամ իջ սնով որ իրման սրբազանի յատուկ է :

Գործին սկիզբը բաւական երկար՝ բայց գեղեցիկ նախարան մ'ունի ուղղակի և սուրբաբար հայոց մի- անդամայն ուղիք մ'առ Մեծպա- ար Զաւթ Աստուածատուր Էֆէն- արի, որ այս ազգու և երկարութե- թեան ազգայնական ծախքը շնոր- հաճ է ազգապարտար :

Յիշեալ նախարանն ու ուղիքն արժան կը համարինք հրատարակել, որպէս զի կարենան ընթերցողք ըստ արժանոյն գնահատել այս կատար- ղործին անկողնի պիտանութիւնն ու օգտակարութիւնն ամեն Հայ ըն- տանեկաց :

Բարեկամ ժողովուրդ հայոց, ձեզ կը նուիրեմ զուգնաբեայ երկարութիւնս, որոյ մտակարան է ԴՐԱՍԻ ԸՆՏԵՆԻՔ : Այս անուն քաղցր ու ժողովրդական է. զի երես շարունակ ու մեղադրեց զիս, զի զըջիս առարկաներն՝ առաւել աշխար- հիս առարկայից վերայ են քան թէ երկ- նից արքայութեան և զիս պիտի դատե՞ք արդեօք՝ երբ եկեղեցւոյ վարդապետ, Աւետարանին աշակերտ, կենաց հացին անտես, թողու իւր բարձրագոյն պաշ- տօնը, Պօղոսի քարոզած երկնից անձառ- զրախը, և երկրի ընտանեկան Գրախ- տի համար ճտակ :

Ճամբար կը լինէր քո այս դատա- տան եթէ երկնից զրախ մտածայի, ու չկապի զայն երկրի գրախտի հետք, որ խկապիս երկնից գրախտին հիմն է : Ես եկեղեցւոյ համար կը խօսիմ, որ Գրախ- տան տեղած գրախտն է, և նորա սուրբ ընտանիքն են նոր եկեղեցւոյ զաւակներ- քը : Ահաւասիկ այդ նոր գրախտի ըն- տանեկաց համար է զոյցն մատակա, յոր

տքնեցայ, որպէս զի գրախտի ընտան- եաց կեանքը բարեբար :

Գրախտ ու հաւատալ պէտք է, որ աշխարհիս ընտանեկան գրախտին մե- զապարտ և անհնազանդ զաւակներն՝ երկնից գրախտը կարող չեն ծառայել : Ուստի այս ընտանեկան կեանքի սեղանին վերայ ես միայն ստակ հայ չի պատրա- տեցի, և թէ պատրաստի ես՝ զիսուս հրաման կուտար ինչպէս առաւ իւր ա- շակերտաց, երբ անապատի մէջ ժողո- վարդը քաղցած հայ կը ինչպիսի՞նք ստաց Յիսուս, « Գրաք տուք զոյցս առեմք : Աս- տի յայտ է թէ՛ » կենաց բանին հետք մերթ ևս ժողովուրդին հաց մատակա- րարին Աւետարանին հաւատակ անուե- սութիւնն չի :

Ժողովուրդ Հայոց, յաշ բեր, ո՞ր է քո հայրենեաց գրախտը զոր կորուսած ես. դուք այն վայելչութեան և աղա- տութեան գրախտին զաւակներն էք. ո՞նչ, մեք հին նախանորդաց պէս գրախ- տի յանդիման նստած կը մտաբերէք կու- լանք զտանապէս : Արդով ու կոծով մեր կորուսած գրախտը միթէ կարող էր զանել յիսով մեր աչքը լայ, մեր սիրտն զոյց. բայց աշխատիք մտքով, աշխա- տիք ձեռքով մեր կեանքն ու վիճակը զանել, և զորա միջոցն է մի միայն ըն- տանիքը վերանորոգել, նոր կեանք նոր ընտանիք կազմել, որոյ առաջին և մի միայն միջոցն է դատարարութիւնն ու կրթութիւնը : Կրթութիւնն էր բարձրաւ և արդի լուսաւորեալ ազգերն այս մի- ջոցն ընտանեկան և այս միջոցով բարձու- ւածեցան, որ այսօր բոլոր արեւելեան ժողովրդոց առաջ նախանձնելի հանդի- սացած են : որոց հանձարոյն՝ յառաջա- դիմութեան և մեծազորութեանց վե- րայ ապրել տարւոյ նայելով կը զարմա- նանք, և մերթ ևս չեմք հաւատար թէ նորա ևս մեզ նման մարդիկ են : Մարդ- կարող չէ ուրանալ թէ նոր աշխարհի այդ հրաշքը՝ ըլլան և գոտարարութիւնն գոր- ձեցին, որ ընտանեկան կեանքն կը ըզրիւն և կը ծառային ժողովուրդին հրա- պարակը :

Ուրեմն հաւատար թէ այդ այդպէս է, թողուք առաւել ինչ և ուշարեւելք մեր մեզ մեզնի կուտե՞ք ու հաւանիք թէ Հայոց ազգին ևս այդ լայն և զատարա- բարութիւն պէտք են : Լայս պէտք է, ա- յո՛ր, որպէս զի հին աշխարհի նախարա- շարմանք բաւանք և նոր աշխարհի ե- կամուտ գեղծմանը կը խելք մեր ըն- տանեկան գրախտն, ապա թէ ոչ գո- քա իւրե մտխոսու և իւրե անտանի փուշ կը հեղձու քանեն մեր գրախտի արեւելեան ծառայիները : Կրթութիւնը աշխարհը բարձր և շարի անբաւ խառնուրդներ կը հա- նել մեր առաջ. պէտք է աշխարհը մերթ և ուշարեւելք. ինչ որ բարի է և օգտակար ինչ որ չարարի ու հատարուելի է իս- բութիւնն է, ինչ որ մեր ներկայ կեանքը կը բարձր է և ապագայն կերտաւարի, զայն միայն բնութեք. և ինչպէս օձն' այնպէս խորշիք ու փոխշիք այն ամեն օտարամտու գեղծմանը կը խելք մեր ընտանեկան կեանքը խանդարելով՝ ի վերջոյ Հայոց ազգի իւրե նշխար մնաց- եալ առն ու տեղը կը քանդեն, և կը թողուն զմեզ թշուառ ու շարաքառակ աշխարհիս վերայ :

Ժողովուրդ Հայոց, քեզ համար նը- կարելի գրախտի ընտանիքը. կազանմ որ իւրե հայելի զնես աշխարհ հանդէպ, Հայիս ու անտան հրաման և հիւճեալ կերպարանքդ և կարիք՝ բերանս՝ թէ շա- րադուշակ լինիք քեզ համար. մահը ինք- նին կը կուտե ու պիտի մեռնիս՝ եթէ չվարժարես գործուն ամենը այդ համա- ճարակ ու մ'այդ մահաբեր պատիկ, որ թէ կանուս թէ անտան գրեզ դէպ ի թշուառութեան գերեզմանը կը տանի :

Սնցեալ կեանքը գործունապի է. այն- շարի բարբարոս արշաւանաց ստեղն դու անխնայ կրկիս անցար. թնամիկ ձեռնք ու քամեց գրեզ ինչպէս խաղցող ինձնատինս Սակայն դու չ'ապուսեցար, տակաւին կաս ու կապրիս, տակաւին որթկերպ և ունեքը կանաչ մնացին : Աստուած, Մաս- եաց Դաւապետ և սուրբ Գրիգոր զքեզ օրհնեցին, վասն որոյ վերջին մնացող ճիւղերովք անձախ և անապական պահ- ւած ես :

Ո՞րքաի անհնարին վիշա է, աւա՛ղ, որպէ՛ս դառն ու դժուարին, երբ դու ինքնին ձեռքդ գրեզ ձեռն ու սպառեալ թիւնը ընկնէ քո մատաղ զաւակները : Աւ- բաստից սե հոգեբուն վերայ սիրտակալիս Զարիստեց ու գրաւեց ազնիւ բարձրներդ : Իսկ դու նայն իսկ ընտանեկան տան ու կեանքիդ մէջ նայն եղեսն կո գործես ու չես ինձնար, և քան այդ հին բարբա- րար՝ դու քաղաքակիրթ գարուս մէջ ա- աւաւել անդիտարար կը վարիս. զի կը թողուս և բնաւ հոգ չունիս թէ զեղծ- մանքը գրեզ և քո սրղեքը ի միտին կ'ապանեն :

Կո խոժտիս թերեւ երբ ինտ կը խօսիմ և խառնութեամբ կը դատեմ գրեզ- և միթէ կը կարծես թէ ես միայն եմ և դու ինքնին գրեզ չես դատեր : Հապա ինչ է այն, որ գործնապարտ արտունջ կը բառնաւ կաղաղակեալ թէ աշուտակ կը կորնչիք : Հրեամբ մի՛ վնիր, զայս սք պատճառ մի՛ դներ, ոչ որ գրեզ կը կորուսան. կորուսա քո ինքն է, քո տն է և քո ընտանիքն : Ուրեմն եթէ ստաց է և կ'զգաս դու թէ կը կորնչիս, և թէ թշուառութեան օրերը մատաղաւ են, պիտի հասնին քեզ, և դու ամեն օր աչքիդ առաջ կը տեսնաս անկեալ ըն- տանեաց վտապին տաւապանքն, այո՛, կը տեսնաս ու տակաւին չես խելարե- բիր, թողիւր ևս զքեզ արեւմտեան հովին և հասնին առաջ, որ աչքախար հաճա- յից զեղծմանը կը գրեզ վարեն ու տանին, և ո՞ր, դու կրտես, ևս կան- լաւ առաջի քեզ թէ ո՞ր կը տանին :

Մեղեցիլը յաւրդ Եստ

Ե Ջ Պ

Իզմիրի ազգային հիւանդանոցին անուամբ անդեալ տարի կատարուե- լիք վիճակահանութիւնն ի սպառեա ետ մնացած ըլլալով, Լորդոյոյ գրատան- եակին միջոցաւ տանակ զնայնեան կը խնդրենք որ գնած տանակին Ինչ գրեզն, որպէս զի Իզմիր զրկելով գրամներն ետ առնուք և իրենց դարձնենք :

ՕՆԵՆՈՒՑՈՒՄ

Պահճէ գարուի ներքը խօսիլի ի բաթմային վրայ բաթմի վտառ խո- նին վերի յարկը թիւ 2) և 22 սենե- կակներուն մէջ Գաղղիերէն Անդ զի- երէն և Թուրքերէն լեզու այ և Քա- նակաղխաութեան (մտթէ մտթիւր) գոտատուութիւն կրկայ : Գաղղիոյ ճեմարանէն վրայական ստացած Գաղ- զիոյցի գոտատու մը գաղղիերէնի բարձր գոտախոսութիւնը վրան ա- սած է. անդ զիոյցի հմուտ գոտա- տու մ'ալ, սրայ գործնական մեթո- տին գերազանցութիւնն իւր աշա- կերտաց այդ ժամանակի մէջ բրած գործնական յառաջիկայութիւնն կըր- նայ չափուիլ, անդ զիոյցի գոտա- խօսութիւնն կրնէ :

Թուրքերէն լեզուի գոտատուն է յիշեալ սենեկայ վարձակալ Գարա- մաթտեան Մեծարդայ Ասաքի է- ֆէնտին, որոյ Թուրքերէն լեզուի մէջ ունեցած գրադիտական հմուտութիւնն և ուսուցչական ընտիր մեթոտը ծա- նօթ է շատերուն :

Գաղղիերէն լեզուի ուսուցման համար, վերջիջեալ գաղղիոյցի վը- կայեալ գոտատուէն զառ հայաղի- հմուտ գոտատու մ'ալ նորա աշա- կերտները գաղղիերէն լեզուին կը վարձեցնեն և գաղղիոյցի գոտատուին գոտերն հասկնալու առաջնորդ կը հայցեն քիչ ժամանակի մէջ. միան- գամայն գաղղիերէն շարադրութիւն, թարգմանութիւն և նամակաղբու- թիւն կուտուցանեն :

Ո՞րքաի յիշեալ սենեակներն եր- թալով՝ Գարամաթտեան Ասաքի է- ֆէնտին կամ գաղղիերէնի երկրորդ

գոտատու Գարաւան էֆէնտին հետ պէտք է խօսի :

Ի Ա Ն

Ասաքիի շահանէ Էլպիսէ անպա- ըր իշին մուսայեա օլունաճար օլուն 42000 թօմ պօղ ընկնիլ իսլիմեա վէ ֆազան աւարներն աօքսան իւր սէնէ- սի Մայիս իպթիտարանան իթիպա- ըն շէհրի իւ զ պին պէշեր երալ թօ- վու թէսլիմ օլունարաք պիւր սէնէտէ արքաղը արնմաք վէ Էսմանը մաք- պուզ սէնէտէլընին վիբուսինտէ սիմ մէճիսլիէ երիմի պիւրէր պուչուք զը- ըուշ հիսապը լըա Էսիլինէ վէ պուլու- նուր իսէ իսլիմեա պէ Սէլանիկ էսվա- լինան հաւալէթէն վէրիւք և իւզերէ պէհէր արշնը 6 դրուշ 5 վարայա օլա- րաք թալիպի էօհանսինտէ օլուպ իշ- պու մարաբ բումինին օն պէշինճի փա- զար էր էսի կիւնիւ գարարը գաթի- սի վէրիլէճէ լինանէ, իթա իթմէ, թա լիպ օլունարըն եէվիմ մէգըրի բաէ Տա- ըր Շուրայի աքքերիէ կէլմէլէրի :

4 Մարտ 1876  
Պապը Սէրապէրի 1

Ասաքիի շահանէ Էլպիսէ անպա- ըր իշին մուսայեա օլունաճար օլուն 1130,000 արշն պօղ ընկնիլ էսիլ Մա- կատաղը ազապներն աօքսան իւր սէ- նէտի մայիս իպթիտարանան իթիպա- ըն շէհրի 96000 արշն մըքաղը թէսլիմ օլունարաք պիւր սէնէտէ ար- քաղը արնմաք վէ Էսմանը մաքպուզ սէնէտէլընին վիբուսինտէ սիմ մէ- ճիսլիէ երիմի պիւրէր պուչուք դրուշ հիսապը լըա Սէլանիկ վիպիլթի էմ- վալինտէն հաւալէթէն վէրիւք և իւզ- ըն պէհէր արշնը 3 1,2 դրուշ օլա- րաք թալիպի էօհանսինտէ օլուպ իշ- պու մարաբ բումինին օն պէշինճի փա- զար էր էսի կիւնիւ գարարը գաթի- սի վէրիլէճէ լինանէ, իթա իթմէ, թա լիպ օլունարըն եէվիմ մէգըրի բաէ Տա- ըր Շուրայի աքքերիէ կէլմէլէրի :

4 Մարտ 1876  
Պապը Սէրապէրի 1

ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՓԱՐԻՉ ՅՄՄԵՐԻԿԱ ՆԵՂՆԵԿ ԲԺՆԻԿ ԲԸՆԷ ԼԸՅԷՊԸ

Պամանակակից հրատարակութեանց մէջ գրեթէ և զաւան յաճողութիւնն մը գոտայ այս գործը՝ որ քիչ առնելի մէջ միլիոններով ապաւած է Եւրոպայի մէջ, հայերէնի թարգմանութեամբ իլըայ ըն- ծայեցաւ Տէալեան տպարանէն :

Իր գանուի Ս. Ղ. և Եղաճեան գրատունը Ենի-ձամի փողոց թիւ 8, և այլ գրախոսաց քով. Գին 2 Փրանք :

Երկրորդ և վերջին հատորն ամ- սոյս 23 ին պատրաստ պիտի ըլլայ :

ԳԱՂՏԵՆԻՔ ՀՆԳԻԱՍՏՏԵՆԻ ԿԱՄ ՄԵՐԺԵՄԱՆ ԱՆԻՆ ԳՈՑԱՍՏ ԶՈՐՍ ՍՈՍԵՄԻԱ ՎԵՐԺԻՆԳՐՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԹԱՆԱՆ ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ

Հետաքրքրական թարգմանութիւնն ի հինգ արար, վեց պատկեր և ի մի վերջարան :

Յ. Կ. Պոյ-ճէալէ

Հետաքրքրաշարժ և ընթերցման արժանի երկ մը, որ Հնդկական սոս- կալի բնկերութեան սկիզբները կրկա- րագրէ, այն մարդակալը ընկերու- թեան սրուն անթիւ Անդրիոյցի զոհ եղած են :

Իր ծախուի բոլոր գրախոսաց քով. նաև Պահճէ գարու Զրախոսաց Պօղոս աղային խանութը և կամուրջի պարագան : Գին 7 1/2 դրշ :

